

ԿԻՐԱԿԻ ՕՐԸ՝ ՏԻՐՈՋ ՄԷՋ ՀԱՆԳՉԵԼՈՒ ՕՐ Է

«Բնա չդադրինք պաշտամունքի հաւաքոյթներուն մասնակցելե...» (Եբր. 10.25): Աստուածային հրահանգ է, որ Աստուծոյ գաւակները միշտ եկեղեցի յաճախեն: Ոնեւ մէկը թող չպատնասուի, թէ ինք շատ զբաղած է եւ հետեւաբար եկեղեցի չի կրնար երթալ Կիրակի օրերը: Յիսուսէն աւելի՞ զբաղած ենք: Յիսուս մնայուն կերպով տանար կը յաճախէր: Ան ուզեց օրինակ դառնալ մեզի: Մէկը թող չըսէ, թէ ինք շաբաթը վեց օր կ'աշխատի եւ եղած չեղածը մէկ օր ունի հանգիստի, այդ ալ Կիրակի օրն է: Ո՞ր կ'ուզես հանգիստ ընել կամ ո՞ր կը գտնես հանգիստդ: Պատշաճ դրուած խորովածին դիմաց, անկողինի՞ մէջ, կլկլակին առջե՞ւ: Ա՞յս է քեզի համար հանգիստը: Յիսուս չըսա՞ւ, որ եթէ իրեն գաս քեզի հանգիստ պիտի շնորհէ (Մտք. 11.28): Չե՞ս հաւատար իր տուած խոստումին:

ՀԵՌԱՆԱՆՔ ՉԱՐ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ

Օգոստինոս Հայրապետ կ'ըսէ. «Չենք կրնար արգիլել, որ թռչունները թռչին մեր գլխուն վերեւ, բայց կրնանք արգիլել անոնց, որ բոյն հաստատեն մեր գլխուն վրայ: Նոյնպէս ալ, մենք չենք կրնար արգիլել չար մտածումներուն յարձակումը մեր մտքին վրայ, բայց կրնանք արգիլել, որ անոնք բոյն հաստատեն մեր մտքին մէջ»:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ



Այսօր բացայայտուած երեւոյթ է, որ երբ Կիրակի օրերը հոգեհանգիստ ըլլայ, եկեղեցին յաւելեալ հաւատացեալներով լեցուն կ'ըլլայ: Բնական է, որ այս ինքնին ցոյց կու տայ մեր ժողովուրդի յարգանքն ու մեծարանքը մեռելներու նկատմամբ:


Բայց ի՞նչ է հոգեհանգստեան իմաստն ու նշանակութիւնը. պարզ յիշե՞լ կամ յարգե՞լ մեր մեռելները, բարեսիրական նպատակներով նուիրատուութի՞ն կատարել, թէ՞ շատ աւելի խորիմաստ նշանակութիւն մը կայ խտացած այդ արարողութեան մէջ:

Նախապէս պէտք է գիտնանք, որ Քրիստոսի եկեղեցին երկու դաս ունի.

- ա.- Չինուորեալ եկեղեցի:
- բ.- Յաղթական եկեղեցի:

Չինուորեալ եկեղեցոյ զաւակները մենք ենք, բոլոր անոնք, որոնք սփրարօրէն կ'իմաստաւորեն Աստուծոյ կողմէ պարգեւ տրուած իրենց կեանքին օրերը...

Շարունակելի



ԲՈՒ ԽՕՍԵՂ ԽՄ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ԺԵ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2022

ԹԻԻ 44

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Ես. 22.15-25: Եփ. 1.1-14: Ղկ. 8.17.21

ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԳՈՒԿԱՍՈՒ 8.17-21

Չկայ ծածուկ բան մը, որ չյայտնուի եւ կամ գաղտնի բան մը, որ չգիտցուի եւ երեսն չգայ: Ուրեմն ուշադիր եղէ՛ք, թէ ինչպէ՞ս կ'ընդունիք այս խօսքերը, որովհետեւ ունեցողին պիտի տրուի, իսկ չունեցողէն պիտի առնուի նոյնիսկ այն՝ ինչ որ կը կարծէ թէ ունի:

Յիսուսի մայրն ու եղբայրները իրեն եկան, բայց խումն բազմութեան պատճառով չկրցան իրեն մօտենալ: Լուր տուին իրեն, ըսելով. «Մայրդ ու եղբայրներդ դուրսն են եւ կ'ուզեն քեզ տեսնել»:

Յիսուս ըսաւ. «Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը կը լսեն եւ կը գործադրեն»:

«Մայրս ու եղբայրներս անոնք են, որոնք Աստուծոյ խօսքը

ԿԸ ԼՍԵՆ ԵՒ ԿԸ ԳՈՐԾԱԴՐԵՆ»:

Վստահաբար մեզմէ իւրաքանչիւրին փափաքն է ըլլալ եղբայր Քրիստոսի: Միրելիներ, կարենորը կամենալն է: Եթէ կ'ուզենք Քրիստոսի եղբայրներ ըլլալ, իր կամքը պէտք է կատարենք, ականջ պէտք է տանք Աստուծոյ ձայնը լսելու աղօթքի ճամբով: Աստուծոյ ձայնը լսելու համար պէտք է լաւապէս ճանչնանք զԱստուած Աստուածաշունչին ընդմէջէն: Աստուածաշունչը մեր ամենօրեայ հոգեւոր սնունդի աղբիւր դարձնենք, մենք՝ որ բոլորս անոր ծարաւը ունինք: Կարդանք, սնանինք, այն ատեն պիտի լսենք եւ գործադրենք այն՝ ինչ որ կը պատգամէ մեզի Քրիստոս:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

«Եթէ վարժուիւն դարձնենք մնայուն կերպով Աստուածաշունչ կարդալը, ի վիճակի կ'ըլլանք հասնելու մեր փրկութեան, կը ճանչնանք թէ՛ ուղիղ դաւանութիւնը եւ թէ՛ առաքիլի վարժը: Նոյնիսկ եթէ մէկը ըլլայ իրիստ յամառ, իստապարանց եւ ծոյլ եւ նոյնիսկ, եթէ անցեալին ոչ մէկ օգուտ քաղած է Աստուածաշունչի ընթերցումէն, կու գայ ժամանակ սակայն, երբ կը սկսի պտուղ տալ, եթէ յարատեւ ընթերցման մէջ» (Յովհան Ոսկեբերան):

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ

Պատրիարք Կ. Պոլսոյ՝ հայր եւ վարդապետ եկեղեցւոյ: Ծնած է 347-ին, Անտիոքի մէջ եւ մեռած է 14 Սեպտեմբեր, 407-ին:

Կանուխէն կրթուած արտաքին գիտութեանց մէջ եւս, ճարտարախօսութեան դասատու ունենալով Լիբանիոսի մման հռետոր մը: Անտիոքի եպիսկոպոսը, Ս. Մելիտոս, զայն դաստիարակեց, մկրտեց եւ ընթերցող ըրաւ: Յովհաննէս յետոյ նոյն քաղաքին մօտակայ լեռները քաշուեցաւ եւ վաղեմի մեծակեացի մը ուղղութեան տակ անձնատուր ըլլալով ուսումնասիրեց Սուրբ Գիրքը, աղօթքի եւ ինքնաշարժութեան: Յետոյ թաքչեցաւ քարայրի մը մէջ, ուր մնաց երկու տարի, որմէ վերջ իր առողջութիւնը հարկադրեց զինքը դառնալ Անտիոք: Մելիտոս՝ սարկաւազ ձեռնադրեց, իսկ Փլաքիանոս՝ անոր յաջորդը, քահանայութեան կոչեց զինք, եւ քարոզչութիւն ալ տուաւ անոր: Պաշտօն, զոր այդ միջոցին միայն եպիսկոպոսները կրնային ունենալ:

398-ին, հակառակ իր կամքին, յաջորդեց Կ. Պոլսոյ Նեկտարիոս պատրիարքին, եւ այդ ատենէն իր անձին վրայ փայլեցուց բարի եւ ընտիր հովուապետի մը առաքիւնութիւնները:

Ան բարեկարգեց կղերը, կանոնաւորեց աղքատներու խնամքը, կառուցել տուաւ հիւանդանոցներ, եւ այնքան ուժգնօրէն ծանրացաւ մեծամեծներուն ազահութեան, ամբարտաւանութեան եւ ցոփ կենցաղին դէմ, որ 403-ին գահընկէց եղաւ Կաղնեաց Ժողովէն եւ Բիւքանիա արքայութեան:

Բայց իր մեկնումին գիշերը, Կ. Պոլսոյ մէջ այնպիսի ահաւոր երկրաշարժ մը պատահեցաւ, որ կայսրուհին զարհուրած, իր ամուսինէն արտօնութիւն ստացաւ Սուրբը ետ կանչել տալու: Բայց այս անգամ, ա՛լ անելի խիստ կերպով քարոզեց արքունիքի զեխութեանց դէմ, ուստի Արկադիոսի եւ Եղորսիայի որոշումով, վերստին գահագուրկ եղաւ եւ արքայութեան նախ չայաստան, Կոկիսոն, յետոյ Կոմանա, ուր Ս. Բասիլիսկոսի վկայարանին մօտ վախճանեցաւ՝ վերջին անգամ Ս. Խորհուրդը մատակարարելէ ետք: Իր մարմինը Կ. Պոլիս փոխադրուեցաւ 434-ին, իր աշակերտին՝ Պրոկոլի պատրիարքութեան օրով: Իր գրականութիւնը, կը ներառէ Պատարագ մը, Ս. Գրոց մեկնութիւններ, քահանայութեան վրայ ճառ մը եւ բազմաթիւ քարոզներ, որոնց մեծ մասը հայերէնի թարգմանուած են Ե. դարու ընտրելագոյն գրաբարով: Անոնք եկեղեցւոյ հայրերուն ամենէն մեծարժէք գործերը կը ներկայացնեն:

ԱՂՕԹՔ Ս. ԲԱՐՍԵՂԷՆ (Օգտակար դառնալու խնդրանք)

Սորվեցո՛ւր մեզի, ո՛վ Տէր, տեսնել եւ օգտագործել ծառայութեան ամէն պատեհութիւն: Թող ըլլանք տուողներ՝ առանց փոխարժէքը հաշուելու, պայքարողներ՝ առանց վիրաւորելու, աշխատողներ՝ առանց հանգիստ փնտռելու, ծառայողներ՝ առանց վարձատրութիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ՝ թէ Քու կա՛մքդ է, որ կը կատարենք: Ամէն:

Հ Ո Գ Ե Ի Ո Ր Պ Ա Տ Գ Ա Ս

ՈՐՈ՛ՆՔ ԿՐՆԱՆ ՏԵՄՆԵԼ ՎԻՐՎԻՈՐ ՄԱՐԳՐԻԿԸ

«Տեսաւ վիրաւորը եւ գթաց անոր» (Ղկ. 10.33): Յիսուս տեսաւ, որ մեղքը վերք յառաջ բերած էր մարդուն սրտին մէջ: Ի՞նչպէս տեսաւ: Ան, որուն հոգիին աչքերը բաց են՝ ան միայն կրնայ տեսնել մեղքով խոցոտուած մարդիկը եւ գթալ անոնց: Մեղքի տիղմին մէջ թաւալող մարդը չի կրնար անդրադառնալ մեղքի կործանարար ներկայութեան: Մեղքէն ազատագրուելէ ետք միայն կրնանք գիտնալ, թէ որքան տգեղ բան է մեղքը:

ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵԻՈՐ ԴԱՍԸ

Միբելի ընթերցող: Դուն կրցա՞ծ ես դուրս գալ մեղքի եւ մթութեան անդունդէն ու բարձրանալ դէպի լուսաւոր Թափոր լեռը: Եթէ յաջողած ես այդ լեռը բարձրանալ, հոնկէ միայն կրնաս տեսնել մեղքի խաւարին մէջ խարխափող մարդիկը: «Տեսաւ վիրաւորը»: Դուն չես կրնար տեսնել վիրաւորը, եթէ դուն ինքդ վիրաւոր մըն ես: «Եւ գթաց անոր»: Դուն չես կրնար գթալ ուրիշին, եթէ դուն ինքդ անգութ ես՝ դուն քու անձիդ հանդէպ: Եթէ դուն քու հոգիիդ չես խղճար՝ անկարելի է, որ խղճաս ուրիշին հոգիին:

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ՍԻՐՏԿ ԿԱՏՈՒԾՈՅ ԿԸ ՏԵՆՉԱՅ, Կարդա՛ր ՍԱԳՄՈՍ 42

Ինչպէս եղբերուն կը փափաքի վազող ջուրերուն, այնպէս ալ ես, ո՛վ Աստուած, ես քեզի՛ կը փափաքիմ: Ծարաւ եմ Աստուծոյ, կենդանի Աստուծոյն: Ե՞րբ պիտի գամ՝ ներկայանամ Աստուծոյ: Օր ու գիշեր՝ արցունքս է կերակուրս, մինչ օրն ի բուն մարդիկ ինձի կը հարցնեն.– «Ո՛ւր է Աստուած»: Որքան կը յիշեմ անցեալ օրերը, այնքան անելի սիրտս կը փղձկի: Ի՞նչպէս բազմութեան գլուխը անցած՝ Աստուծոյ տունը կ'երթայի ցնծութեան ու երախտագիտութեան կանչերով, մինչ բազմութիւնը տօն կը կատարէր: Սակայն ինչո՞ւ կը խոռվիս: Աստուծո՛յ յուսա, եւ վերստին գովբեզէ զայն ըսելով.– «Փրկիչս դո՛ւն ես»: Աստուած իմ, սիրտըս ա՛յնքան տխուր է: Ահա թէ ինչու՛ տարագիր այս վիճակիս մէջ՝ կը մտածեմ՝ բո՛ւ մասիդ, Յորդանանի երկրին, Հերմոնի եւ Փոֆր լեռան վրայ: Միտքս կ'երթայ ստեղծագործութեանդ օրերուն, երբ ովկիանոսները ովկիանոսներուն կ'արձագանգէին ջրվէժներու շառաչով: Որովհետեւ ճիշդ այդպէս՝ բարկութեանդ յորձանքներն ու բոլոր ալիքները փշրուեցան իմ վրաս:

Տէրը ինձի հետ է, ցերեկը՝ իր ցուցաբերած հոգածութեամբ, գիշերը՝ իր երգով, որ աղօթք է Աստուծոյ, զիս կենդանի պահողին: Եւ աղօթքիս մէջ Աստուծոյ կ'ըսեմ.– Դուն ես իմ պաշտպան Վէմս, ինչո՞ւ մոռցար զիս. ինչո՞ւ համար տրտում ըլլամ, երբ թշնամի կը նեղէ զիս: Կարծես մահացու հարած կը ստանամ ամէն անգամ, որ ոտիներս զիս կը նախատեն՝ հարցնելով.– «Ո՛ւր է Աստուածդ»: Սակայն ինչո՞ւ պիտի տխրիմ, եւ կամ ինչո՞ւ խոռվիմ: Աստուծոյ պիտի յուսամ, եւ վերստին գովբեզեմ զայն, ըսելով.– «Փրկիչս ես դուն, իմ Աստուածս ես»: